Պարույր Սևակ

Հանելուկ առաջին

-Իսկ այդ ի՞նչն է,
Որ երբ հասավ՝
Փախցընում է մեր քունն աչքից:
Պապիկն իսկույն հազն իր հազաց
Ու երբ պրծավ բարեհաջող,
Իսկույն ասաց.
-Ծերությո՛ւնը:
Պատերազմի երես տեսած
Հայրիկն ասաց.
-Գերությո՛ւնը:
Մայրիկն ասաց.
-Մերությո՛ւնը:
Ու կրկնեց.
-Մերությո՛ւնը:
Փոքրիկ տղան
Փոքրիկ ափը զարկեց ափին
Ու ձայնիկն իր միացնելով
Զնգուն ծափին՝
Չասա՛ց... գոռա՛ց.
-Ձմեռ Պապի՛ն:
Իսկ աղջիկը արբունքահաս՝

Վառված ձեռով
Հարդարելով իր վարսերը՝
Ոչի՛նչ չասաց.
Բայց մտածեց.
-Պա՞րզ չէ, սե՛րը...

01.III.1967թ.
Արզնի